ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ

ՄԱՄՆԱՃՅՈՒՂ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

ԱՌԱՐԿԱ՝ Ազգային երգ ու պար

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Նելլի Էդիկի Սիմոնյան

ԽՄԲԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

ԻՋԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑԻՉ-ԾՆՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ…… ……...…5

1.1 ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ……..……....6

ԳԼՈՒԽ 2. ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՑԻՉ-ԾՆՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ……...11

ԳԼՈՒԽ 3. ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ և ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ……..….....…13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……14

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ……..…… 15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ……..16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Ընտանիքն ու դպրոցը ափն ու ծովն են ։ Լողափում երեխան անում է իր առաջին քայլերը , իսկ հետո նրա առջև բացվում է գիտելիքի աներևակայելի ծով ։ Իսկ դպրոցն այս ծովում ուղի է գծում>>:

Լև Կասիլ

Ընտանիքն ու դպրոցը կրտսեր դպրոցականների հիմնական դաստիարակներն են ։ Հետևաբար , ուսուցչի կրթական , դաստիարակչական աշխատանքի արդյունավետությունը մեծապես կախված է սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ համագործակցելու , ընդհանուր լեզու գտնելու և նրա օգնությանն ու աջակցությանն ապավինելու կարողությունից ։ Ճիշտ է՝ ուսուցիչ-ծնող հարաբերությունները կարող են գոյություն ունենալ այլ ձևաչափով ՝ առանց դրանց մասնակիցների այսինքն ՝ անուղղակի՝կապող օղակ հանդիսացող սովորողի միջոցով, սակայն շփման այս ձևը խրախուսելի չէ , որովհետև հղի է մի շարք բացասական հետևանքներով:

Հասարակության յուրաքանչյուր անդամի զարգացման հիմքում ընկած է կրթությունը:

<<Կրթությունը սոցիալական գործընթաց է ամենալայն իմաստով:Կրթվում է ամեն ինչ՝ մարդիկ , իրերը , երևույթները , բայց ամենից և ամենաշատը ՝ մարդիկ: Առաջին տեղում են ծնողներն ու ուսուցիչները>>:

Ուկրաինացի մանկավարժ և գրող Անտոն Մակարենկոյի խոսքերն ապացուցում , ընդգծում են ուսուցչի և ծնողների փոխըմբռնման կարևորությունը ։

Արդիականությունը: Սույն հետազոտության արդիականության համար հենք է հանդիսանում այն , որ կրթության ժամանակակից մոդելը մեծ պահանջներ է դնում սովորողների վրա: Անկասկած , յուրաքանչյուր սովորող կարող է հաջողակ լինել , բայց պետք է ստեղծել այնպիսի միջավայր , որտեղ երեխան կարողանա լիարժեք արտահայտվել,ինքնադրսևորվել: Սա մեծ ջանքեր է պահանջում ոչ միայն ուսուցչից, այլ նաև ծնողներից : Ուստի ընտանիքի և դպրոցի համագործակցությունը ողջ ուսումնական գործընթացի մեծ բաղադրիչն է և միայն երկուստեք փոխըմբռնման դեպքում է հնարավոր բարձր արդյունքների հասնել ոչ միայն ուսուցման , այլ նաև սովորողի դաստիարակության գործում:

Նպատակ:

- Կապ ստեղծել դպրոցի և սովորողի ծնողի միջև :
- Ներգրավել ծնողին դպրոցական գործընթացին, համագործակցել ուսումնա-դաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակ, ներգրավել դասարանական, համադպրոցական, արտադասարանական միջոցառումներին:
- Բարենպաստ պայմաններ ստեղծել սովորողի լիարժեք սոցիալական զարգացման, դաստիարակության և կրթության համար:

- Ցույց տալ ծնող- ուսուցիչ արդյունավետ փոխգործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության ու դաստիարակության գործընթացում:

ԽՆԴԻՐՆԵՐ:

- Ինչպե՞ս ներգրավել ծնողներին միջին և ավագ դպրոցներում ուսումնադաստիարակչա կան խնդիրների լուծման պրոցեսին:
- Ինչպե՞ս ներգրավել ծնողներին իրենց երեխաների կրթությանը վերաբերող հարցերի մասին որոշումներ կայացնելու գործին:

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից երեք գլուխներից , եզրակացություններից և առաջարկություններից , վերջում կցված օգտագործված գրականության ցանկը:

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑԻՉ-ԾՆՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

<<Յուրաքանչյուր երեխայի մեջ կա լավը , և դաստիարակության գործընթացը պետք է կառուցել դրականի վրա հենվելու սկզբունքի հիման վրա>> : Վ. Սուխումլինսկի

<<Յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու և ուսումնական հաստատություն ընտրելու իրավունք>>:[1]

Այս իրավունքներն ամրագրված են ՀՀ օրենսգրքի մեջ և յուրաքանչյուր երեխայի կրթության գործընթացը կազմակերպելը, դաստիարակության, վարքի առումով հաջողություններ գրանցելը հնարավոր է միայն ուսուցիչների և սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների սերտ համագործակցության արդյունքում :Այդ համագործակցությունը թեև երկար աշխատանք է , երբեմն լի խնդիրներով ու բարդույթներով ,բայց նպատակաուղղված է սովորողի կրթության բարելավմանը :

Քանի որ տարբեր աշակերտներ ունեն տարբեր ընդունակություններ և ոչ բոլոր աշակերտներն են օգտագործում իրենց ողջ ընդունակությունները `ոմանց խանգարում է բնավորությունը , ոմանց ` մտածելակերպը , ոմանց ` ծնողների սխալ մոտեցումը , ուստի նրանք հաճախ դասին ներկայանում են ոչ այնքան պատրաստված , որքան թույլ է տալիս իրենց ընդունակությունները :

Հետևություն՝ արդյունավետ կրթություն ստանալու համար բավական չեն միայն ուսուցիչների կողմից տարվող աշխատանքները, ուսուցիչ – աշակերտ կապը ,պետք է շղթայական աշխատանք տարվի և՛ ուսուցչի , և՛ ծնողի կողմից ` ուսուցիչ – աշակերտ , ուսուցիչ – ծնող և ծնող –աշակերտ մշտական փոխհամագործակցությունը պահպանելով:Քանի որ դպրոցի գերնպատակն է կերտել բարոյական , ազգային

[1] ՀՀ Երեխայի իրավունքի մասին օրենք գլուխ2 , հոդված 11

արժեքներով օժտված , կիրթ սերունդ ,ուստի այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է կատարելագործել վերը նշված փոխհամագործակցությունը:

<< Չկա ավելի հզոր ուժ, քան գիտելիքը: Գիտելիքներով զինված մարդն անպարտելի է>>: Է Մ.Գորկի

Գիտելիքն ամենակարևոր ձեռքբերումն է , որը կօգնի սովորողներին ճիշտ կառուցել իրենց ապագան : Ուսուցիչ- ծնող համատեղ աշխատանքի գլխավոր նպատակը նախ և առաջ սովորողի առաջադիմությունն է :Պետք է ոչինչ չխնայել և սովորողներին զինել որքան հնրավոր է շատ գիտելիքներով և հորդորել միշտ պատրաստ ներկայանալ դասին , ստանալ լավ և գերազանց գնահատականներ : Իհարկե , գովելի է բարձր գնահատականները , բայց ոչ առաջնային : Պետք է և՛ սովորողը , և՛ ծնողը հասկանան , որ գնահատականները հարաբերական են : Սխալ է , երբ ծնողը սկսում է համեմատականներ տանել իր երեխայի և դասարանում սովորողների ձեռքբերումների միջև:

Երբ որևէ աշակերտ իր երեխայից ավելի բարձր գնահատականներ է ստանում , ծնողը սկսում է ծանրաբեռնել իր երեխային ՝ տալով լրացուցիչ հանձնարարություններ , որոնք ավելի շատ վնասում , քան օգտակար լինում : Դրան զուգահեռ ծնողները հաճախ պատժում են նրանց ՝ զրկելով սիրելի խաղերից , ուտելիքից , հեռախոսից : Արդյունքում դժգոհում է և՛ ուսուցիչը, և՛ ծնողը , որովհետև երեխան դառնում է դյուրագրգիռ և իհարկե չի գրանցում առաջադիմություն :

Հետևություն՝ ծնողը պետք է անպայման համագործակցի ուսուցչների հետ , որոնք ոչ միայն մանկավարժներ են , այլ նաև հոգեբաններ և կարող են ավելի ճիշտ մոտեցումներ ցուցաբերել , կարող են ճիշտ ուղղորդել ծնողին ՝ հետևելու սովորողի դասապատրաստումներին: Ծնողը պետք է ընդունի , որ իր երեխան անհատականություն է, պետք չէ նրան այլոց հետ համեմատել , թերագնահատել նրան և նրա կարողությունները:

<<Սովորողի ծնողը իրավունք ունի համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով >>: [2]

Ճիշտ կլինի , որ ծնողը համեմատականներ տանի իր երեխայի ներկա և նախորդ տարիների առաջադիմության միջև , ոգևորի , խրախուսի նրան և նա անպայման հաջողություններ կգրանցի :

Համագործակցումն ավելի հաճախ պետք է լինի այն ծնողների հետ , ում երեխան ավելի շատ ունի դրա կարիքը: Ուսուցիչ-ծնող համագործակցումը պետք է իրականացվի ուսումնական ամբողջ տարվա ընթացքում:

Կարևոր է նաև ծնողի վերաբերմունքը մանկավարժի , դպրոցի և կրթության նկատմամբ:Ուսումնառության ընթացքում անհնար է խուսափել մանկավարժական խնդիրներից,որոնք կամա ,թե ակամա ստեղծվում են ինչպես աշակերտների , այնպես էլ ուսուցիչների կողմից:Շատ կարևոր է ,որ դասավանդող ուսուցիչները ուշադրություն դարձնեն ցանկացած մանկավարժական իրավիճակի , ճիշտ մոտեցում ցուցաբերեն և իրավիճակին համապատասխան լուծում տան:

Խնդրի լուծման համար ուսուցիչը նախ պետք է զրուցի սովորողի , անհրաժեշտության դեպքում նրա ծնողի կամ օրինական ներկայացուցչի հետ:Վերջինս պետք է կարողանա ճիշտ գնահատել իրավիճակը, պետք է կարողանա ընդունել իր երեխայի սխալները և հասկանա , որ դպրոցն իր երեխայի համար գիտելիքի աղբյուր է , ուսուցիչը ՝ այդ գիտելիքը փոխանցողը, դաստիարակողն ու կրթողը ՝ առանց երևէ խտրականություն դնելու :

Ուսուցիչը պետք է կարողանա նաև լուծել անձի ձևավարման , դաստիարակության հարցերը , որը հնարավոր է անհատական աշխատանքների միջոցով :Այդ աշխատանքը պահանջում է ոչ միայն մեծ համբերություն , այլ նաև ճիշտ մոտեցում:

Ուսուցիչը պետք է անպայման կարողանա հաշվի առնել ծնողի կարծիքը , չհակադրվել նրան , այլ լսել , փորձել հասկանալ նրան : Ծնողն էլ իր հերթին պետք է կարողանա ընդունել ուսուցչի կողմից նկատված բնավորության վատ գծերը , արված

[2] ՀՀ Հանրակրթության մասին օրենք ,հոդված 28 կետ 2

դիտողությունները , որպեսզի ուսուցչի աշխատանքը լինի արդյունավետ թե՛ կրթության , թե՛ դաստիարակության հարցում:

Սա նշանակում է՝ երկուստեք վստահությունն անհրաժեշտություն է, եթե ցանկանում են օգտակար լինել աշակերտին և արդյունքներ գրանցել :

1.1 Գրական ակնարկ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂԻ ԿԱՄ ՆՐԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԵՏ ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ Հին դպրոցական աֆորիզմում ասվում է. «Երեխաների հետ աշխատելու ամենադժվարը նրանց ծնողների հետ աշխատելն է»:| Ընտանիքը, որպես կրթական կոլեկտիվ, ունի մի շարք առանձնահատկություններ: Առաջին հերթին այն կոլեկտիվ է՝ միավորված ոչ միայն ընդհանուր նպատակով, այլև ազգակցական 5 կապերով: Ծնողական զգացմունքները, ծնողական սերը մի տեսակ կատալիզատոր են, որն արագացնում է անձի զարգացումը: Սա համեմատաբար կայուն թիմ է, որտեղ շփումը տեղի է ունենում անընդհատ, հնարավոր ամենալայն տարածքներում, տարբեր գործողություններում: Ընտանիքում է դրվում և ապահովվում անհատականության կարևորագույն գծերի դաստիարակությունը: Դրանում սովորողը ստանում է աշխարհի մասին առաջին պատկերացումները, այստեղ ձևավորվում է հասկացությունների, հայացքների զգացմունքների, սովորությունների ֆոնդը, որն ընկած է անհատի բարոյական ձևավորման հիմքում:Միայն ընտանիքում է հնարավոր ստեղծել և վերարտադրել իսկապես ազգակցական հարաբերությունների մշակույթ, տիրապետել սոցիալական կարևորագույն դերերին, ձևավորել մշակույթ, հարստացնել բարոյական փորձը: Ընտանիքը կոչված է ապահովելու երեխայի կյանքի ողջամիտ կազմակերպումը, օգնելու յուրացնել ավագ սերունդների կյանքի և աշխատանքի դրական փորձը, կուտակել գործունեության , սովորությունների, հարաբերությունների արժեքավոր անհատական փորձ: Ծնողների հետ փոխգործակցությունը դպրոցի և յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում հրատապ և բարդ խնդիրներից է:

Շատ բան կախված է ուսուցչի ինտուիցիայից, հմտությունից, ով պետք է վերլուծի տարբեր հանգամանքների համալիրը, որպեսզի ճիշտ որոշում կայացնի որոշակի իրավիճակում ծնողների և սովորողի հետ շփվելու մեթոդների և միջոցների ընտրության հարցում: Ծնող- ուսուցիչ կապի պահպանումը ուսումնական գործընթացում աշակերտի հաջողության բանալին է, իսկ ծնողների և դպրոցի միջև կապի բացակայությունը , ինչպես նաև դպրոցի ու ծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են երեխայի կրթությանն ու դաստիարակությանը: Երկկողմանի համագործակցության շնորհիվ կարելի է սովորողի համար ապահովել այնպիսի կրթական միջավայր, որտեղ վերջինս իրեն կզգա պաշտպանված ու կարևոր: Ծնողուսուցիչ համագործակցությունն իր դրական ազդեցությունն է ունենում սովորողի առաջադիմության, արժեհամակարգի ձևավորման, հաջողություններ և հաղթանակներ ունենալու վրա: Ծնողների և ընտանիքների ներգրավումը իրենց երեխաների կրթության գործում արժեքավոր ներդրում է ցանկացած ծրագրի համար: Ընտանիքին յուրաքանչյուր երեխայի կրթության իմաստալից մասը դարձնելու համար ուսուցիչը պետք է՝ .ծնողներին և ընտանիքներին դիտի որպես գործընկերներ .կանոնավոր կերպով հաղորդակցվի նրանց հետ . հրավիրի ընտանիքներին իրենց մասնակցությունը բերելու ծրագրին . ընդլայնի աջակցությունը ընտանիքներին՝ տնային պայմաններում ուսմանը նպաստելու նպատակով .աջակցի ընտանիքներին ռեսուրսներից և ծառայություններից օգտվելու հարցում:/ «Քայլ առ քայլ» -ի չափորոշիչների կիրառումը դասարաններում/ Արդյունքում սովորողը միշտ կլինի ուշադրության կենտրոնում, կլինի կառավարելի և որոշակի խնդիրների առկայության դեպքում հեշտությամբ կլուծի իր առջև ծառացած 7 խնդիրները: Ուսուցիչը կարող է նաև համագործակցության արդյունքում օգնել սովորողի ծնողին ցանկացած կոնֆլիկտային իրավիճակներում: Հետազոտությունները ցույց են տվել, որ սովորողները ավելի լավ են դպրոցում, երբ նրանց ծնողը կամ խնամակալը ներգրավված է ուսումնական գործընթացին: «Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը , այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք

միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի առաջադիմության բարելավմանը: Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր առաջադիմություն, այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, սովորողի մոտ զարգանում է սոցիալական շատ կարևոր հմտություններ և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք շատ կարևոր գործոններ են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Ծնողները տեղեկացված են լինում իրենց երեխաների կրթական կարիքների մասին և խրախուսում են ներգրավվելը: http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf Ծնող- դպրոց կապը ավելի կամրապնդվի, եթե հաճախակի հրավիրվեն ծնողական ժողովներ, հանդիպումներ, խորհրդատվություններ, տարբեր հետաքրքրաշարժ միջոցառումներ: Այդ կապը էլ ավելի կզարգացնենք, եթե օգտագործենք ժամանակակից տեխնոլոգիաներ: Օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները /համակարգիչ, հեռախոս/ կարելի է ծնողների հետ քննարկումները կատարել հեռավար: Տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս երեխայի կրթական կարիքների և ուսման առաջադիամությանկամ կարգապահական խնդիրների մասին տեղեկանալ ավելի շուտ: Ուսուցիչն օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները կարող է աշակերտի առաջընթացի մասին հաշվետվություն ուղարկել տուն՝ շաբաթական կամ ամսեկան մի քանի անգամ: Միացման այս ձևը ծնողներին տալիս է սովորողի գիտական առաջընթացի շոշափելի վկայություններ:

ԳԼՈՒԽ 2. ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՑԻՉ-ԾՆՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ե՛վ ծնողը , և՛ ուսուցիչը պետք է հաճախակի զրուցեն հայրենիքի , ընտանեկան արժեքների , ազգային ավանդույթների , մարդկային հարաբերությունների , չարի ու բարու , լավ ու վատ սովորությունների մասին , որն էլ կձևավորի սովորողի արժեհամակարգը , կսովորեցնի վարքի ճիշտ դրսևորումը , միջավայրում լիարժեք մարդ զգալու գաղափարը: Նմանատիպ զրույցներ ծավալելու համար էլ հատկացված են դասղեկի ժամերը: Երբեմն պետք է հրավիրել որոշ ծնողների , ովքեր կարող են համատեղ վարել այդ դասապրոցեսը:

<<Պետք է ստեղծել տարածք երեխայի ինքնության զարգացման , ներաշխարհի հարստացման համար>>:[3]

Ուսումնական , դաստիարակչական գործնթացին ծնողի ներգրավվածությունն ավելի է պարտավորեցնում աշակերտին հետևել սեփական վարքին , առաջադիմությանը:

Կարևոր է նաև ծնողի ներգրավվածությունը դպրոցական կյանքին , հատկապես , երբ ծնողն ակտիվ է և մտահաղացումներով լի :Դպրոց – ծնող նման կապը միայն դրական անդրադարձ կարող է ունենալ կրթական հաստատության վրա : Ուսուցիչը կարող է ոչ միայն խրատներ տալ , այլ նաև լսել , ընդունել ծնողների խելամիտ առաջարկները:

[3] Նորավանի միջնակարգ դպրոց <<Դասղեկական ժամի դաստարակչական գործառույթները>>

Երկկողմանի համագործակցության , համատեղ դասը վարելու շնորհիվ կարելի է սովորողի համար ստեղծել այնպիսի կրթական միջավայր , որտեղ նա իրեն կզգա պաշտպանված և կարևորված:

Ծնողին ուսումնական , դաստիարակչական պրոցեսին ընդգրկելու համար ուսուցիչը պետք է նրանց դիտի որպես գործընկեր , հաճախակի հաղորդակցվի նրանց հետ և ընդգրկի մի շարք իրականացվող ծրագրերի մեջ:

Այս ամենի արդյունքում աշակերտը միշտ կլինի ուշադրության կենտրոնում և առաջացած ցանկացած խնդիր երկուստեք ջանքերի շնորհիվ հեշտությամբ կլուծվի

ԳԼՈՒԽ 3. ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ և ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Կրթության կազմակերպման , ընտանեկան դաստիարակության հարցերը քննարկելու համար կարևոր է հաճախակի հրավիրել ծնողական ժողովներ , շփվել ծնողների հետ , անկաշկանդ վեր հանել այն խնդիրները , որոնք խոչընդոտում են օրինակելի վարք ունենալուն , լավ սովորելուն:

Ուսուցիչը պետք է ուշադիր լինի իր խոսքին ,հետևի ձայնի տոնայնությանը , որպեսզի չվիրավորի աշակերտին , նրա օրինական ներկայացուցչին, նրանց արժանապատվությանը , ինչը կարող է առաջացնել ծնող –ուսուցիչ կոնֆլիկտ : Պետք է կառուցողական մթնոլորտ ստեղծել նախ աշակերտների հետ , այնուհետև ծնողների հետ ՝ ծնողական ժողովներին:

Ծնողական ժողովներին պետք չէ խոսել միայն սովորողների վատ վարքագծից, վատ առաջադիմությունից, պետք է զուգահեռաբար ներկայացնել նաև դրական կողմերը , թեկուզ գրանցած փոքրիկ հաջողությունները: Այսինքն, կիրառելով <<սենդվիչի մեթոդը>>, առանց ընկճելու ծնողին , տեղեկացնում ենք սովորողի թույլ կողմերի մասին ,որոնք շտկման կարիք ունեն: Այս մեթոդը հանդիսանում է ավելի հետևողական լինելու և հաջողություններ գրանցելու շարժառիթ:

Ծնող- ուսուցիչ կապի պահպանումը աշակերտի բոլոր բնագավառներում գրանցած հաջողությունների բանալին է, իսկ այդ կապի բացակայությունը վնասում է սովորողի և՛ կրթությանը, և՛ դաստիարակությանը: Նման վնաս կարող են պատճառել նաև դպրոցի և ծնողի չհամաձայնեցված գործողությունները:

Կարևոր է նաև ուշադրություն դարձնել սովորողի աշխատանքային դաստիարակությանը: Ծնողները հաճախ խնդիր են ունենում ծույլ երեխաների դաստիարակության հետ : Այդ վատ սովորությունից ազատվելու միակ միջոցը սովորողին հաճախակի աշխատանքային տարբեր ոլորտներում ներգրավվելն է :

Աշխատանքային դաստիարակության գործում նույնպես կարևոր է ծնողի և ուսուցչի համագործակցումը , որի արդյունքում երեխայի մեջ կզարգանա աշխատանքի նկատմաբ հետաքրքրասիրությունը , կբարձրանա նրա պատասխանատվությունը , հասարակությանը օգտակար լինելու ցանկությունը , աշխատելու կարևորությունը :

Հաշվի առնելով նոր ժամանակների , կրթական համակարգի պահանջները , հետաքրքրություններն ու պահանջմունքները , պետք է ոչ միայն ուսուցիչը , այլ նաև ծնողն ուշադիր լինի,թե ինչով է զբաղվում սովորողը դպրոցում , արտադասարանական , ինչպես նաև արտադպրոցական միջոցառումների ժամանակ , ինչ հետաքրքրություններ ու նախասիրություններ ունի :Սա կօգնի կանխել հնարավոր բացասական միջադեպերը :

Ե՛վ ուսուցիչը , և՛ ծնողը պետք է մեծ ուշադրություն դարձնեն սովորողի համացանցից ճիշտ օգտվելը: Դեռահասության շրջանում համացանցի հասանելիության պատճառով հնարավոր է սովորողները բախվեն կիբեռխնդիրների՝ հատկապես կիբեռբուլինգի հետ : Սա հետապնդումների , ճնշումների , ահաբեկումների , բռնությունների ամենատարածված ձևերից մեկն է դեռահասների և երիտասարդների շրջանում:Այս բավականին վտանգավոր երևույթը անմիջապես ազդում է սովորողի կրթության, վարքի , տրամադրության և բնավորության փոփոխման վրա:Սովորողի մոտ նկատվող յուրաքանչյուր փոփոխություն պետք է ուշադրության կենտրոնում պահել : Նպատակահարմար է , որ երկուստեք՝ ծնող – ուսուցիչ, միմյանց իրազեկեն և խորհրդակցեն:

Այսպիսով , թե՛ ծնողը , թե՛ ուսուցիչը վստահ կլինեն , որ իրավիճակն իրենց հսկողության տիրույթում է:

Հետևություն ՝ մենք ՝ ուսուցիչներս , պետք է կառուցողական ու բարձր որակի հարաբերություններ ստեղծենք սովորողի ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ հաշվի առնելով ,որ երկու կողմի նպատակն ու խնդիրը մեկն է ՝ ունենալ արժանի սերունդ:

Եզրակացություններ

Ես՝լինելով 7-րդ դասարանի դասղեկ ,կատարելով մի շարք դիտարկումներ, հանգեցի հետևյալ եզրակացության.

.Ուսուցչի, ծնողի,սովորողի կամ նրա օրինական ներկայացուցչի համագործակցությունը շատ կարևոր և պատասխանատու գործընթաց է,որի հիմքում սովորողին ճիշտ դաստիարակելու, կրթության իրավունքի իրականացումն է:

.Ուսուցիչ- սովորող- ծնող օղակը պետք է ունենա միասնական պահանջներ և նպատակներ:

.Ընտանիքի և ծնողի համագործակցության մեջ ուսուցիչները պետք է ցուցաբերեն անհրաժեշտ մանկավարժական տակտ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հաճախակի կատարել տնայցեր ՝սովորողի վարքի և առաջադիմության բարելավման նպատակով ։
- Դասղեկական ժամերին հաճախակի ընդգրկել ծնողներին։
- Խնդիրներով երեխաների ծնողների հետ հաճախակի ունենալ անհատական զրույցներ։
- Միջոցառումներին ընդգրկել ծնողներին ՝ծնող-դպրոց կապն ամրապնդելու նպատակով ։
- Կազմակերպել ծնող-ուսուցիչ հերթապահություն ՝ ուսուցիչ- ծնող -աշակերտ կապն ամրապնդելու և աշակերտների վարքը վերահսկելու նպատակով ։
- Վերը թվարկվածներից զատ ունեմ ևս մեկ շատ կարևոր առաջարկ՝ եկեք հարգենք ու սիրենք, շատ սիրենք միմյանց ՝մեր ուսուցիչներին ,մեր սաներին ,նրանց հարգարժան ծնողներին ,հանդուրժող ու ներողամիտ լինենք միմյանց նկատմամբ ,քանզի միայն այս հենքի վրա կարող ենք ամուր կառուցել ուսուցիչ-սովորող -ծնող ամրոցը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գ.Ն. Հարությունյան <<Մանկավարժական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները տարրական դպրոցում >>

2.Ջ.Հ.Գյուլամիրյան <<Երկխոսություններ ծնողների հետ>>Երևան Զանգակ 97

3.<<Առողջ ապրելակերպ>>(7-րդ դասարանի ուսումնական նյութ)

4.ՀՀ Երեխայի իրավունքի մասին օրենք

5 . ՀՀ հանրակրթության մասին օրենք

6.http/kargiskolage/parent/pdf/PE.GUIDE.Armenian.pdf-Ծնողների ներգրավվածությունը